Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 16-ի N 792 - Ն որոշման

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՈՒԼԻՆ ԼԻԶՊՐՈ 100 ՄՄ/ՄԼ ԵՎ ԻՆՍՈՒԼԻՆ ՄԱՐԴՈՒ ԻԶՈՖԱՆ (ՌԵԿՈՄԲԻՆԱՆՏ) 100 ՄՄ/ՄԼ ԴԵՂԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 42 արձանագրային որոշման N 1 հավելվածի 14-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն իրականացրել է գնման ընթացակարգ, մասնավորապես, 2014 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հայտարարվել է հակադիաբետիկ դեղերի ձեռքբերման գնման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել միայն «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերության հայաստանյան գործընկեր «ՄԼՆ-ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ հետևյալ գներով՝ ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ՝ մեկ փամփուշտի համար՝ 6500 դրամ (14.21 ԱՄՆ-ի դոլար), և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ՝ մեկ փամփուշտի համար՝ 2790 դրամ (6.1 ԱՄՆ-ի դոլար):

2. Ստացված հայտի բացումից և գնահատումից հետո՝ պայմանագրի նախագծի շուրջ վարվող բանակցությունների ընթացքում «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերության կողմից ներկայացվում են նոր գնային առաջարկ և ծրագիր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետությունում շաքարային դիաբետով տառապող երեխաների ու երիտասարդների համար հնգամյա ծրագիր իրականացնելու վերաբերյալ առաջարկ, որտեղ, բացի ապրանքային գնային իջեցված առաջարկներից (քան ներկայացվել է գնման ընթացակարգի ընթացքում հայտեր ներկայացնելու ժամանակ), հաշվի առած հետագա բանակցությունների արդյունքները (ըստ սկզբնական առաջարկի (ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ՝ մեկ փամփուշտի համար՝ 9 ԱՄՆ-ի դոլար, և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ՝ մեկ փամփուշտի համար՝ 5 ԱՄՆ-ի դոլար) (ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ՝ մեկ փամփուշտի համար՝ 8.5 ԱՄՆ-ի դոլար, և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ՝ մեկ փամփուշտի համար՝ 4.7 ԱՄՆ-ի դոլար), նշված է նաև 5 տարվա ընթացքում իրականացվող ծրագրային ներդրումների վերաբերյալ առաջարկ:

3. Հաշվի առնելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն ընդունել է որոշում դիմել ինսուլին արտադրող այլ կազմակերպությունների՝ նմանատիպ ծրագրային առաջարկ ստանալու համար, ինչի արդյունքում ինսուլին արտադրող մնացած 2 կազմակերպություններ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից նամակ է ուղարկվել՝ նմանատիպ ծրագրի իրականացման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար: Արդյունքում՝ «Սանոֆի Ավենտիս» ընկերությունը չի արձագանքել, իսկ «Նովոնորդիսկ» ընկերությունն ուղարկել է առաջարկ: Ստորև ներկայացվում է «Նովոնորդիսկ» և «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերությունների առաջարկների համեմատական աղյուսակը:

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Կ Ա Ն   Ա Ղ Յ Ու Ս Ա Կ

«ՆՈՎՈՆՈՐԴԻՍԿ» ԵՎ «ԷԼԱՅ ԼԻԼԼԻ ԵՎ ՔԱՄՓՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| «Էլայ Լիլլի և Քամփնի» | | | | | «Նովոնորդիսկ» | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները և նյութերը | Գումարը (ԱՄՆ-ի դոլար) | Ժամանակացույցը՝ ծրագրի սկզբից | Պետության կողմից ֆինանսավորումը (ԱՄՆ-ի դոլար) | Պետության կողմից ձեռք բերվող ապրանքների միավորի գինը (ԱՄՆ-ի դոլար) | Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները և նյութերը | Գումարը (ԱՄՆ-ի դոլար) | Ժամանակացույցը՝ ծրագրի սկզբից | Պետության կողմից ֆինանսավորումը (ԱՄՆ-ի դոլար) | Պետության կողմից ձեռք բերվող ապրանքների միավորի գինը (ԱՄՆ-ի դոլար) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| Երևանում և ՀՀ մարզերում դիաբետի կառավարման 4 կենտրոնի բացում՝ համապատասխան վերանորոգմամբ, կահավորմամբ և սարքավորումների ձեռքբերմամբ | 20,000 | 3-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ ամիսներ՝ համապատասխանաբար | 0 | | Չի առաջարկել | 0 | 0 | 0 | |
| Բոլոր կենտրոնների համար դիաբետի վերաբերյալ ուսուցանողների պատրաստում | 6,000 | 3-րդ, 4-րդ ամիսներ | 0 | | միջազգայնորեն որակավորված հատուկ դասավանդողների պատրաստում և հմտությունների ուսուցում | Չի նշված | Չի նշված | 0 | |
| Առաջադեմ երկրների փորձի փոխանակման նպատակով դասընթացների կազմակերպում | 20,000 | յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ | 0 | | կրթական ուսուցում դիաբետով հիվանդ երեխաների և դեռահասների համար, դիաբետի միջազգային կազմակերպության կողմից հաստատված տպագրական և համակարգչայնացված կրթական նյութերի շարունակական տրամադրում | Չի նշված | Չի նշված | 0 | |
| Դիաբետի կառավարման 4 կենտրոնի համար գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1) չափման անալիզատորների ձեռքբերում | 9,200 | 2-րդ ամիս | 0 | | Չի առաջարկել | 0 | 0 | 0 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի բոլոր շահառու-ներին գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1) չափման համար անհրա-ժեշտ թեստ-երիզների տրամադրում | 60,000 | յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ | 0 | | Չի առաջարկել | 0 | 0 | 0 | |
| Ինսուլինային գրիչ-ներարկիչների անվճար տրամադրում՝ 2000 հատ | 100,000 | 1-ին ամիս | 0 | | Առաջարկել է 1000 հատ* | Չի նշված | Չի նշված | 50 000* | |
| Դիաբետի միջազգային օրը. Դիաբետի միջազ-գային ֆեդերացիայի (IDF)-I կողմից իրակա-նացվող միջոցառումներ ՀՀ-ում և այլ երկրներում | 39,800 | ամեն տարի դիաբետի միջազգային օրը՝ նոյեմբերի 14-ին | 0 | | Չի առաջարկել | 0 | 0 | 0 | |
| Գովազդային գործունեություն | 15,000 | 6-րդ և 12-րդ ամիսներ (ամեն տարի) | 0 | | Գովազդային գործունեություն | Չի նշված | Չի նշված | 0 | |
| Ինսուլին լիզպրո (առանց տարիքային սահմանա-փակման) | | | 206,848 | 8.5 | ինսուլին նովորապիդ (կարելի է օգտագործել 2 տարեկանից բարձր) | | | 148,443.5 | 6.1 |
| Ինսուլին մարդու իզոֆան | | | 171,550 | 4.7 | ինսուլատարդ | | | 148,190 | 4.06 |
| Ասեղներ՝ գրիչ-ներարկիչների համար | 31,525 | | | | | | | | |
| Ծրագրի շրջանակներում կատարվող ներդրում-ների տարեկան պայմանական չափը | 54,000 | | | | | | | | |
| Ընդամենը՝ 1 տարի | 85,525 | | 292,873 | | | | | 296,633.5 | |
| Ընդամենը՝ 5 տարի | 427,625 | | 1,464,365 | | | | | 1,483,167.5 | |

* Ենթադրվող հավելյալ ծախս պետության կողմից (ընդամենը՝ գումար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 16-ի N 792 - Ն որոշման

ԻՆՍՈՒԼԻՆ ԼԻԶՊՐՈ 100 ՄՄ/ՄԼ ԵՎ ԻՆՍՈՒԼԻՆ ՄԱՐԴՈՒ ԻԶՈՖԱՆ
(ՌԵԿՈՄԲԻՆԱՆՏ) 100 ՄՄ/ՄԼ ԴԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ

| NN ը/կ | Անվանումը | Չափի միավորը | Գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|
| 1. | Ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ | փամփուշտ | 8.5 |
| 2. | Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ | փամփուշտ | 4.7 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 16-ի N 792 - Ն որոշման

# MEMORANDUM OF UNDERSTANDING

BETWEEN
THE MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

AND
“ELI LILLY AND COMPANY”

AND
“DEFEAT DIBETES TOGETHER” NGO

ON IMPROVEMENT OF HEALTH CARE SERVICE FOR DIABETIC CHILDREN AND ADOLESCENCE IN THE REPUBLIC OF ARMENIA

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,

ԵՎ
«ԷԼԱՅ ԼԻԼԼԻ ԵՎ ՔԱՄՓՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԵՎ
«ՀԱՂԹԵՆՔ ԴԻԱԲԵՏԸ ՄԻԱՍԻՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

**The Ministry of Health of the Republic of Armenia**,
represented by Minister Armen Muradyan,
Legal Address: Government Building 3,
0010, Yerevan,
Republic of Armenia
Tel.: +37410-582413, Fax: +37410-565207,
hereinafter referred to as
“**Ministry of Health**”,

**Eli Lilly and Company**,
represented by Country Manager of Ukraine, Belarus, Moldova, Republic of Armenia, Georgia, Azerbaijan,
PhD Sergey Kalashnyk,
Legal Address: 9/2 Vasylkivska Str.,
off. 15, 01004, Kyiv, Ukraine
Tel.: +(38044) 4902585;
Fax +(38044) 4902588,
hereinafter referred to as
“**Eli Lilly and Company**”,

“**Defeat Diabetes Together**” **NGO**, represented by Khandut Hovhannisyan,
Legal Address: Paronyan st., bld. 11, h.9, 0015
Yerevan, Republic of Armenia
Tel.: +37410-523140
hereinafter referred to as
**“Defeat Diabetes Together”**

hereinafter referred to separately as "**the Party**" or together as "**the Parties**",

**Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարությունը,**
ի դեմս նախարար Արմեն Մուրադյանի,
Գտնվելու վայրը՝Կառավարության տուն N 3, 0010, Երևան,
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.: +37410-582413,
Ֆաքս: +37410-565207, այսուհետ՝
**«Առողջապահության նախարարություն»,**

**«Էլայ Լիլլի և Քամփնի»** ընկերությունը,
ի դեմս Ուկրաինայում, Բելառուսում, Մոլդովայում, Հայաստանի Հանրապետությունում, Վրաստանում և Ադրբեջանում տարածաշրջանային մենեջեր,
բ.գ.դ. Սերգեյ Կալաշնիկի,
Իրավ. հասցե՝9/2 Վասիլկիվսկա փ./15, 01004,
Կիև, Ուկրաինա,
Հեռ: +(38044) 4902585,
ֆաքս +(38044) 4902588,
այսուհետ՝ **«Էլայ Լիլլի և Քամփնի» ,**

**«Հաղթենք դիաբետը միասին» հասարակական կազմակերպությունը,**
ի դեմս Խանդութ Հովհաննիսյանի,
գտնվելու վայրը՝ Պարոնյան փ., շ. 11, բն. 9, 0015
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.:+37410-523140
այսուհետ՝ **«Հաղթենք դիաբետը միասին»,**

այսուհետ՝ առանձին **՝«Կողմ»**, իսկ միասին ՝ **«Կողմեր»**

## PREAMBLE

Considering that

- In the whole world, as well as in the Republic of Armenia diabetes is one of the most important medical and social problems, which in a short period of time leads to disability and reduced life expectancy.
- According to data provided by World Health Organisation (WHO) there are 387 million people with diabets all over the world. (http://www.idf.org/diabetesatlas/update-2014)
- According to WHO data the Republic of Armenia has the highest number of deaths caused by diabetes, which is 50,9 deaths per 100 000 population.
- Diabetes is the most common chronic disease among children. Moreover, according to the International Diabetes Federation in the world each year about 80 million children under the age of 15 have type 1 diabetes (http://www.idf.org/diabetesatlas/update-2014)
- In 2014 in the Republic of Armenia there were 440 children with diabetes aged 0-17, and 177 adolescent aged 18-22. As compared to the data of 2010 in 2014 there is 37% growth of disease among children aged from 0 to 17.

## ՆԱԽԱԲԱՆ

Հաշվի առնելով, որ

- Ամբողջ աշխարհում, ինչպես նաև ՀՀ-ում շաքարային դիաբետը կարևորագույն բժշկասոցիալական խնդիրներից է, որը կարճ ժամանակահատվածում բերում է հաշմանդամության և կյանքի միջին տևողության կրճատման:
- Ըստ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ աշխարհում շուրջ 387 միլիոն մարդ ունի շաքարային դիաբետ: (http://www.idf.org/diabetesatlas/update-2014)
- ԱՀԿ տվյալներով տարածաշրջանում ՀՀ-ն ունի շաքարային դիաբետից մահացության ամենաբարձր ցուցանիշը, որը կազմում է 50.9 մահվան դեպք 100 000 բնակչի հաշվով:
- Երեխաների շրջանում շաքարային դիաբետը առավել տարածված քրոնիկական հիվանդությունն է: Ավելին՝ Դիաբետի Միջազգային Ֆեդերացիայի տվյալներով աշխարհում յուրաքանչյուր տարի մինչև 15 տարեկան շուրջ 80 հազար երեխա ունենում են տիպ 1 շաքարային դիաբետ (http://www.idf.org/diabetesatlas/update-2014)
- 2014թ. ՀՀ-ում շաքարային դիաբետով 0-17 տարեկան երեխաների թիվը կազմել է 440, իսկ 18-22 տարեկան երիտասարդներինը՝ 177: 2010թ. տվյալների համեմատությամբ՝ 2014թ. մինչև 0-17 տարեկան երեխաների մոտ արձանագրվել է հիվանդության 37% աճ:

**Pursuing Following Objectives**

- To improve the health and quality of life of children and adolescence with diabetes,
- To prevent the development of possible acute and chronic complications of diabetes among diabetic children and adolescence,
- To support efficient learning and treatment for children and adolescence with diabetes,
- To provide international and inter-sectors collaboration in the health care field,
- To implement “Control Diabetes, live the full

**Նպատակ ունենալով**

- Բարելավել շաքարային դիաբետով երեխաների և դեռահասների առողջությունը և կյանքի որակը,
- Կանխարգելել դիաբետով երեխաների և դեռահասների մոտ հնարավոր սուր և քրոնիկական բարդությունների առաջացումը,
- Աջակցել դիաբետով երեխաների և դեռահասների որակյալ ուսուցմանը և բուժմանը,

life" event 2015-2019 program according to Appendix 1 (hereinafter referred to as Program), which is designed for 440 people aged from 0 to 17 and 177 people aged from 18 to 22 having type 1 diabetes in the Republic of Armenia.

- Ապահովել միջազգային և միջոլորտային համագործակցությունը առողջապահության ոլորտում,
- Իրականացնել «Վերահսկի՛ր դիաբետը, ապրի՛ր լիարժեք կյանքով» միջոցառումների 2015-2019 թթ. ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Ծրագիր), որը նախատեսված է ՀՀ-ում տիպ 1 շաքարային դիաբետ ունեցող 0-ից 17 տարեկան՝ 440 և 18-ից 22 տարեկան՝ 177 անձանց համար:

**Agree as follows:**

**Համաձայնում են հետևյալի շուրջ.**

**<u>Article 1</u>: Undertakings by the Ministry of Health**

**<u>Հոդված 1.</u> Առողջապահության նախարարության պարտավորությունները**

The Ministry of Health (hereinafter MoH) undertakes to:

ՀՀ առողջապահության նախարարությունը պարտավորվում է.

- Maintain human and public health, improve population's health, prevent disease, and reduce disability and mortality indicators, according to its charter goals
- Purchase annually Insulin Lispro 100MM/ml by USD 8,5 per cartridge and Insulin human isophan (recombinant) 100MM/ml by USD 4,7 per cartridge from <<MLN Pharm>> Limited Liability Company, the local partner of "Eli Lilly and Company", as defined by RA Gevornment 2015 decree N---, on the basis of signed Agreement.
- Support the Program and contribute to the administration of all events, within the framework of its competence
- Select project participants and promote their participation in trainings provided by this project,
- Promote participation of appropriate professionals in events and activities within the collaboration,
- If necessary participate in organized media events to support the implementation of the program
- Promote public awearness and media coverage of the program and post news

- Իր կանոնադրական նպատակներին համապատասխան պահպանել մարդու և հանրության առողջությունը, բարելավել բնակչության առողջությունը, կանխարգելել հիվանդությունները, նվազեցնել հաշմանդամության և մահացության ցուցանիշները,
- ՀՀ կառավարության 2015 թվականի –ի _Ն որոշմամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա «Էլայ Լիլլի և Քամփընի» ընկերության տեղական գործընկեր «ՄԼՆ Ֆարմ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունից տարեկան գնել Ինսուլին լիզպրո 100ՄՄ/մլ՝ 1 փամփուշտը 8,5 ԱՄՆ դոլարով և Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100ՄՄ/մլ՝ 1 փամփուշտը 4,7 ԱՄՆ դոլարով:
- Իր իրավասության սահմաններում օժանդակել Ծրագրին և նպաստել դրա միջոցառումների իրականացմանը,
- Ծրագրով նախատեսված դասընթացներում ընդգրկելու նպատակով ընտրել ծրագրի մասնակիցներին և աջակցել նրանց մասնակցության ապահովմանը,

about events within the program on the MoH of RA official website.

- Խրախուսել համապատասխան մասնագետների մասնակցությունը համագործակցության շրջանակներում իրականացվող միջոցառումներին և գործողություններին,
- Ըստ անհրաժեշտության մասնակցել զանգվածային լրատվության միջոցներով, որով իրականացվող միջոցառումներին, որոնք կխթանեն Ծրագրի իրականացմանը,
- Իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ և տեղադրել Ծրագրի շրջանակներում տեղի ունեցող իրադարձությունների հետ կապված նորությունները ՀՀ Առողջապահության պաշտոնական էլեկտրոնային կայքում:

**<u>Article 2</u>: Undertakings by "Eli Lilly and Company"**

"Eli Lilly and Company" undertakes, to the extent possible and permitted by law, to:

- Provide Insulin Lispro 100MM/ml and Insulin human isophan (recombinant) 100MM/ml to <<MLN Pharm>> according to RA Government 2015 decree N---, on the basis of signed agreement with MoH, to provide Insulin Lispro 100MM/ml by USD 8,5 per cartridge and Insulin human isophan (recombinant) 100MM/ml by USD 4,7 per cartridge.
- «Eli Lilly and Company» plans to implement this program in collaboration with MoH with local partners “MLN Pharm” LTD and supply insulin, as well provide free of charge 1000 “HumaPen Luxura” pen-syringes and 1000 “HumaPen Ergo” pen-syringes.
- Establish 4 education centers for diabetes in ««Arabkir» Joint Medical Center and Institute of Child and Adolescent Health» Limited Liability Company, «Muratsan» Medical Complex of «Yerevan State Medical University after Mkhitar Heratsi» Fund, «Austrian Children's Hospital of Gyumri» Closed Joint-Stock Company, «Yerevan Endocrinological Dispensary» Closed Joint-Stock Company.
- Provide the prepared printing materials to the Education Centers in ««Arabkir» Joint Medical Center and Institute of Child and Adolescent Health» Limited Liability Company, «Muratsan» Medical Complex of

**<u>Հոդված 2</u>. «Էլայ Լիլլի և Քամփնի» պարտավորությունները**

«Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերությունը պարտավորվում է՝ իր հնարավորությունների և օրենքի թույլատրելիության սահմաններում.

- ՀՀ կառավարության 2015 թ. որոշման -ի համաձայն -----“ՄԼՆ Ֆարմ” սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Ինսուլին լիզպրո 100ՄՄ/մլ՝ և Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100ՄՄ/մլ՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ կնքված պայմանագրին համապատասխան մատակարարելու համար Ինսուլին լիզպրո 100ՄՄ/մլ՝ 1 փամփուշտը 8,5 ԱՄՆ դոլարով և Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100ՄՄ/մլ՝ 1 փամփուշտը 4,7 ԱՄՆ դոլարով
- «Էլայ Լիլլի և Քամփնի»-ն նախատեսում է սույն՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ Ծրագիրն իրականացնել տեղական գործընկեր՝ “ՄԼՆ Ֆարմ” ՍՊԸ-ի հետ միասին և մատակարարել ինսուլին ու անվճար տրամադրել 1000 Հումապեն Լուքսուրա ինսուլինային գրիչ – ներարկիչներ և 1000 Հումապեն Էրգո ինսուլինային գրիչ –ներարկիչներ:
- Ստեղծել դիաբետի 4 կրթման կենտրոններ՝ ««Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների ու դեռահասների Առողջության Ինստիտուտ» սահմանափակ պատասխանատվությամբ

«Yerevan State Medical University after Mkhitar Heratsi» Fund, «Austrian Children's Hospital of Gyumri» Closed Joint-Stock Company, «Yerevan Endocrinological Dispensary» Closed Joint-Stock Company, established for children and adolescence with diabetes (1 set for each Center) -"Diabetes Conversation Map®" Toolbox

- Train 10 educators offered/approved by MoH in "Eli Lilly and Company's" education programs and tools; support them in their subsequent application of the tool: 1 initial training session and 8 experience sharing sessions (every 6 month),
- Provide grant to «Defeat Diabetes Together» Non-Governmental Organization to implement the functions planned in Appendix 1,
- "Eli Lilly and Company" is ready to cooperate with specialized centers and organizations running in RA that are engaged in problems of children and adolescence with diabetes

**Article 3: Undertakings by "Defeat Diabetes Together" NGO**

- Ensure the premises renovation, furnishing and equipping of the 4 (four) established diabetes centers for children and adolescence with diabetes in ««Arabkir» Joint Medical Center and Institute of Child and Adolescent Health» Limited Liability Company, «Muratsan» Medical Complex of «Yerevan

ընկերությունում, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Մուրացան» հիվանդանոցային համալիրում, «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունում, «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունում,

- Ապահովել ««Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների ու դեռահասների Առողջության Ինստիտուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Մուրացան» հիվանդանոցային համալիրում, «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունում, «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունում, շաքարային դիաբետով երեխաների և դեռահասների համար ստեղծված կրթման կենտրոնները կրթական նյութերով («Շաքարային դիաբետի երկխոսության քարտեզ») (1 փաթեթ յուրաքանչյուր Կենտրոնին)
- Վերապատրաստել ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջարկված/համաձայնեցված 10 մասնագետ «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերության կրթական ծրագրերով և գործիքներով, աջակցել նրանց գործիքների հետագա կիրառման ընթացքում. 1 նախնական դասընթաց և 8 փորձի ներդրման դասընթացներ՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ:
- Տրամադրել դրամաշնորհ «Հաղթենք Դիաբետը Միասին» հասարակական կազմակերպությանը՝ սույն հուշագրի հավելված 1-ով նախատեսված գործառույթները իրականացնելու համար:
- «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերությունը պատրաստ է նաև համագործակցել ՀՀ-ում գործող մասնագիտացված բժշկական կենտրոնների և շաքարային դիաբետով երեխաների և դեռահասների խնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ:

**Հոդված 3. «Հաղթենք դիաբետը միասին» Հասարակական կազմակերպության պարտավորությունները**

State Medical University after Mkhitar Heratsi» Fund, «Austrian Children's Hospital of Gyumri» Closed Joint-Stock Company, «Yerevan Endocrinological Dispensary» Closed Joint-Stock Company,

- Provide an HbA1c analyzer and consumables for HbA1c tests for each Center in ««Arabkir» Joint Medical Center and Institute of Child and Adolescent Health» Limited Liability Company, «Muratsan» Medical Complex of «Yerevan State Medical University after Mkhitar Heratsi» Fund, «Austrian Children's Hospital of Gyumri» Closed Joint-Stock Company, «Yerevan Endocrinological Dispensary» Closed Joint-Stock Company,
- Organize a venue for diabetes educating trainings,
- Support to the process of informing public about the given program
- Provide MoH with Report until the 10th day of following month of each trimester on the implementing issues by the required form of the Ministry.

- Ապահովել ««Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների ու դեռահասների Առողջության Ինստիտուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Մուրացան» հիվանդանոցային համալիրում, «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունում, «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունում երեխաների և դեռահասների համար բացված դիաբետի 4 կենտրոնների վերանորոգումը, կահավորումն և սարքավորումների ձեռք բերումը
- Ապահովել գլիկոզիլացված հեմոգլոբինի(HbA1c) անալիզատորներ և անալիզատորների համար անհրաժեշտ թեստեր՝ «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների ու դեռահասների Առողջության Ինստիտուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Մուրացան» հիվանդանոցային համալիրում, «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունում, «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունում,
- Կազմակերպել դիաբետի կրթական դասընթացների անցկացման վայրը
- Նպաստել ծրագրի հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը:
- Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-րդ օրը ներկայացնել նաշվետվություն աշխատանքների վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությանը՝ նախարարության կողմից սահմանված ձևաչափով:

**<u>Article 4:</u> License to use Logo**

- Neither party acquires any rights nor interest in

**<u>Հոդված 4:</u> Լոգոն օգտագործելու թույլտվություն**

- Կողմերից ոչ ոք չունի որևէ

any intellectual property owned by or used by the other party other than as specified in this Agreement.

- "Eli Lilly and Company" grants to Parties, a non-exclusive, royalty-free, non-transferable license to use the logo, solely for the purpose of performing their obligations under this Agreement. Such use must be in accordance with any standards and guidelines prescribed by "Eli Lilly and Company".
- Parties grant to "Eli Lilly and Company", a non-exclusive, royalty-free, non-transferable license to use the logo, solely for the purpose of promoting the Collaboration/Project. Such use must be in accordance with RA laws and any standards and guidelines prescribed by Parties which are elaborated in accordance with RA legislation.
- "Eli Lilly and Company", retains all intellectual property rights in any material created or developed by "Eli Lilly and Company", or its officers, employees, contractors or representatives in the course of performing the activities described in this Agreement. Parties are however entitled to use that material for the purposes described in this Agreement.
- Upon termination of this Agreement, the parties will immediately cease to use the other party's name and logo.

իրավունք կամ հետաքրքրություն մյուս կողմի մտավոր սեփականության հանդեպ՝ բացառությամբ սույն Հուշագրում նշվածների:

- «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերությունը իր կողմերին շնորհում է ոչ բացառիկ, հոնորարից ազատ, ոչ փոխանցելի թույլտվություն՝ օգտագործելու իր լոգոն՝ միմիայն սույն Հուշագրում նշված իրենց պարտականությունները կատարելու նպատակով: Նման գործածությունը պետք է լինի Լիլլիի կողմից սահմանված ցանկացած ստանդարտներին և ուղեցույցներին համապատասխան:
- Կողմերը շնորհում են «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերությանը ոչ բացառիկ, հոնորարից ազատ, ոչ փոխանցելի թույլտվություն օգտագործել լոգոն (առկայության դեպքում)՝ սույն հուշագրով նախատեսված Ծրագրի իրականցման նպատակով: Նման գործածությունը պետք է լինի՝ ըստ ՀՀ օրենսդրության և դրա հիման վրա Կողմերի կողմից սահմանված ստանդարտների և ուղեցույցների:
- «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերությունը պահպանում է մտավոր սեփականության բոլոր իրավունքները՝ սույն Հուշագրում նշված գործունեության իրականացման ընթացքում՝«Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերության կամ իր աշխատակիցների, կապալառուների կամ ներկայացուցիչների կողմից ստեղծված նյութերի հանդեպ: Սակայն Կողմերը իրավասու են օգտագործել այդ նյութերը՝ սույն Հուշագրում նշված նպատակով:
- Սույն Հուշագրի ավարտին Կողմերը անմիջապես պիտի դադարեցնեն օգտագործել մյուս կողմի անվանումն ու լոգոն:

**Article 5: Confidentiality**

**Հոդված 5. Գաղտնիությունը**

Parties undertake
1)to respect the secrecy of data being secured by RA law
2)not to divulge to any other entity, of all documents, data, outcomes, transmitted to them or of which they may become aware in the context of executing this Memorandum of Understanding, throughout the duration of this Memorandum of Understanding and for five (5) years after expiry of its term or termination, unless otherwise expressly agreed by the Parties.

Կողմերը պարտավորվում են՝
1)պահպանել Հայաստանի Հանրապետության օրենքներով պահպանվող գաղտնի տվյալները
2)փոխադարձ համաձայնությամբ այլ անձանց չփոխանցել Հայաստանի Հանրապետության օրենքներով գաղտնի չհամարվող տեղեկություններ պարունակող այն բոլոր փաստաթղթերը, տվյալները, և արդյունքները, որոնք փոխանցվել են նրանց կամ որոնց նրանք կարող են տեղյակ լինել սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում՝ դրա գործողության ընթացքում և գործողության ժամկետը լրանալուց հետո (5) հինգ տարվա ընթացքում, եթե այլ բան ուղղակիորեն համաձայնեցված չէ Կողմերի միջև:

The obligations concerning confidentiality do not apply to Confidential Information:

a) where the recipient Party can prove that at the date it was communicated to it by the other Party, this information was already in its possession,

b) which falls into the mass media domain after its communication to one of the Parties without this being attributable to the latter,

c) which one of the Parties is required to divulge in pursuance of laws, regulations or definite decisions of justice, on condition that this Party immediately informs the Party divulging the information.

Սույն ենթակետի Գաղտնիությանը վերաբերող պարտավորությունները չեն կիրառվում Գաղտնի Տեղեկատվության վրա.
ա) եթե ստացող Կողմը կարողանում է ապացուցել, որ այն ժամանակ, երբ այն տրամադրվել է մյուս Կողմի կողմից, նա արդեն տիրապետում էր այդ տեղեկատվությանը,
բ) որը Կողմերից մեկին տրամադրվելուց հետո հայտնվում է Զանգվածային լրատվության միջոցներում՝ առանց վերջինիս իրավասության,
գ) որը Կողմերից մեկը պարտավոր է հրապարակել՝ համաձայն օրենքների, կամ դատական ակտերի, այն պայմանով, որ այդ Կողմն անհապաղ տեղեկացնի այդ մասին տեղեկությունը հրապարակող Կողմին:

**<u>Article 6</u>: Termination and Warranties**

This Memorandum of Understanding can be terminated in one of the following cases:

• unilaterally, by means of a notice of termination issued by one Party because it has observed non-compliance by the other party with its obligations, with a period of notice of thirty (30) days stipulated by registered letter with acknowledgement of receipt,

by mutual consent between the Parties

. at the end of its term, if the Parties do not renew their undertakings.

. If one of the Parties fails to meet its contractual

**<u>Հոդված 6.</u> Դադարեցումը և երաշխիքները**

Փոխըմբռնման հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել հետևյալ դեպքերում

. միակողմանիորեն, Կողմերից մեկի կողմից դադարեցման մասին նախապես (30) երեսուն օր առաջ հետադարձ ծանուցմամբ պատվիրված նամակով ծանուցելու միջոցով, եթե մյուս Կողմը չի կատարել իր պարտավորությունները,

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

• վերջինիս գործողության ժամկետի ավարտի դեպքում, եթե Կողմերը չեն վերսկսում իրենց պարտավորությունները:

• Եթե Կողմերից մեկը չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները և

obligations and, if relevant, fails to remedy the consequences of this breach within thirty (30) days of receiving a period of notice from the other Party, the latter can terminate the Memorandum of Understanding.

եթե համապատասխանաբար չի վերացնում խախտման հետևանքները՝ մյուս Կողմի կողմից ծանուցում ստանալուց հետո (30) երեսուն օրվա ընթացքում, վերջինս կարող է միակողմանիորեն դադարեցնել Փոխըմբռնման հուշագրի գործողությունը:

. Notwithstanding the foregoing, either Party shall have the right to terminate the Memorandum of Understanding at any time for any reason upon a thirty (30) days prior written notice.

• Անկախ վերոնշյալից, յուրաքանչյուր Կողմ իրավունք կունենա ցանկացած ժամանակ, ցանկացած պատճառաբանությամբ դադարեցնել Փոխըմբռնման հուշագիրը՝ երեսուն (30) օր առաջ գրավոր ծանուցմամբ:

This Memorandum of Understanding can be revised as necessary upon agreement of all Parties.

Անհրաժեշտության դեպքում Փոխըմբռնման հուշագիրը կարող է վերանայվել բոլոր Կողմերի համաձայնությամբ:

**Article 7: Laws and regulations applicable to disputes**

This Memorandum of Understanding shall be governed by the law of Republic of Armenia. Any dispute linked to execution of this Memorandum of Understanding shall be resolved through negotiations. Failing such negotioations between the Parties, the Armenian courts shall be competent to resolve any dispute.

**Հոդված 7. Վեճերի նկատմամբ կիրառելի օրենսդրությունը**

Փոխըմբռնման հուշագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Սույն Փոխըմբռնման հուշագրի կատարմանը վերաբերող ցանկացած վեճ լուծվում է բանակցությունների ճանապարհով: Կողմերի միջև բանակցությունների բացակայության դեպքում, վեճը իրավասու են լուծել ՀՀ դատարանները:

**Article 8: Legal Status of the Memorandum of Understanding and Effective Date**

The Parties agree that this Memorandum of Understanding is an agreement binding the Parties, and shall become effective once it has been signed by all Parties and will be effective till the end of program.

**Հոդված 8. Փոխըմբռնման հուշագրի իրավական կարգավիճակը և կիրառման ժամկետը:**

Կողմերը համաձայնում են, որ այս Փոխըմբռնման հուշագիրը պարտադիր է Կողմերի համար և ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից մինչև ծրագրի ավարտը:

**Article 9: Languages**

This Memorandum of Understanding has been signed in __________ city on __________2015, in three copies, each copy in Armenian and English languages, both texts are deemed as legally equal.

**Հոդված 9. Լեզուները**

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ստորագրվել է քաղաք ______________, ________ 2015թ., երեք օրինակից, յուրաքանչյուր օրինակը հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

**Article 10: Other Conditions**

The exact civil rights and duties towards the implementation of this Memorandum are defined by civil and juridical agreement signed according to RA legislation.

**Հոդված 10.Այլ դրույթներ**

Սույն հուշագրի կատարմանը ուղղված կոնկրետ քաղաքացիական իրավունքներ և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով:

**FOR**
**THE MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA**

______________________________

The Minister of Health
Armen Muradyan

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

______________________________

Առողջապահության նախարար
Արմեն Մուրադյան

**FOR**
**Eli Lilly and Company**

______________________________

Country manager of Ukraine, Belarus, Moldova, Armenia, Georgia, Azerbaijan, M.D., PhD Sergey Kalashnyk

**«Էլայ Լիլլի ԵՎ Քամփնի»**

______________________________

Ուկրաինայում, Բելառուսում, Մոլդովայում, Հայաստանի Հանրապետությունում, Վրաստանում և Ադրբեջանում տարածաշրջանային մենեջեր, բ.գ.դ. Սերգեյ Կալաշնիկ

**FOR**
**“DEFEAT DIABETES TOGETHER” NGO**

______________________________

The president of “Defeat Diabetes Together” NGO Khandut Hovhannisyan

**«ՀԱՂԹԵՆՔ ԴԻԱԲԵՏԸ ՄԻԱՍԻՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

______________________________

«Հաղթենք դիաբետը միասին» հասարարական կազմակերպության նախագահ՝ Խանդութ Հովհաննիսյան

**Փոխըմբռման հուշագրի հավելված**
**Հավելված 1**

«Վերահսկի՛ր դիաբետը, ապրի՛ր լիարժեք կյանքով» միջոցառումների 2015-2019 թթ. ծրագիրը

| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ և նյութեր | Ժամանակացույց ծրագրի սկզբից | Գումար *(դրամին համարժեք դոլար)* |
|---|---|---|
| **«Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերություն** | | |
| Բոլոր կենտրոնների համար դիաբետի ուսուցանողների պատրաստում | 3-րդ/4-րդ ամիս | 6,000 |
| Տպագիր կրթական նյութերի տրամադրում | 6-րդ և 12-րդ ամիս (ամեն տարի) | 15,000 |
| Առաջադեմ երկրների փորձի փոխանակման նպատակով դասընթացների կազմակերպում | Ամեն եռամսյակը մեկ | 20,000 |
| Ինսուլինային գրիչ-ներարկիչների անվճար տրամադրում 2000 հատ (ՀՀ-ում իր գործընկեր «ՄԼՆ Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով) | Ծրագրի սկզբին | 100,000 |
| Ասեղներ գրիչ-ներարկիչների համար (ՀՀ-ում իր գործընկեր «ՄԼՆ Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով) | Ծրագրի սկզբին | 31,525 |
| Դիաբետով հիվանդների հաշվառման շտերամանի ստեղծում | 12-րդ ամիս | 0 |
| **«Հաղթենք Դիաբետը Միասին» հասարակական կազմակերպություն** | | |
| Երևանում և ՀՀ մարզերում դիաբետի կառավարման 4 կենտրոնների վերանորոգում, կահավորում և սարքավորումների ձեռքբերում | 3-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ ամիս համապատաս-խանաբար | 20,000 |
| Դիաբետի կառավարման 4 կենտրոնների համար գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1) չափման անալիզատորների ձեռքբերում | 2-րդ ամիս | 9,200 |
| Ծրագրի բոլոր շահառուներին գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1) չափման համար անհրաժեշտ թեստ-երիզների տրամադրում | Ամեն եռամսյակը մեկ | 60,000 |
| Դիաբետի միջազգային օրը Դիաբետի Միջազգային Ֆեդերացիայի (IDF)-ի կողմից իրականացվող միջոցառումներ ՀՀ-ում և այլ երկրներում | Ամեն տարի դիաբետի միջազգային օրը՝ նոյեմբերի 14-ին | 39,800 |
| **Ընդամենը 1տարի** | | **85,525** |
| **Ընդամենը 5տարի** | | **427,625** |

# Appendix to Memorandum of Understanding

## Appendix 1 “Control Diabetes, live the full life” event program

| Required events and materials for program implementation | Schedule from program beginning | Amount *(USD equivalent to AMD)* |
|---|---|---|
| **«Eli Lilly Company»** | | |
| Diabetes educators' training for all the centers | 3rd/4th month | 6,000 |
| Providing printing materials | 6th and 12th month (each year) | 15,000 |
| Training session organization on purpose of experience sharing on the basis of leading countries | Each trimester | 20,000 |
| 2000 items of insulin pen-injectors free of charge (through its local partner «MLN Pharm») | In the beginning of the Program | 100,000 |
| Needles for pen-injectors(through its local partner «MLN Pharm») | In the beginning of the Program | 31,525 |
| Implementation of Accounting System for Diabetic Patients | 12th month | 0 |
| **«Defeat Diabetes Together» NGO** | | |
| Renovation, furnishing and equipping of the 4 (four) established diabetes centers for children and adolescence with diabetes in Yerevan and marzes of Republic of Armenia, | 3rd, 7th, 9th, 12th month respectively | 20,000 |
| Purchase of HbA1 analysers for 4 centers of diabetes centers | 2nd month | 9,200 |
| Providing of HbA1 tests for all beneficiaries | Each trimester | 60,000 |
| Events organizes by International Diabetes Foundation on Diabetes International Day in Armenia and other countries | Each year on 14th Novermber, Diabetes International Day | 39,800 |
| **Total 1 year** | | **85,525** |
| **Total 5 years** | | **427,625** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ　　　　Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 16-ի N 792 - Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԷԼԱՅ ԼԻԼԼԻ ԵՎ ՔԱՄՓՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՄԼՆ-ՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՂԹԵՆՔ ԴԻԱԲԵՏԸ ՄԻԱՍԻՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՀԱՏՈՒՑՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԳՐԻՉ-ՆԵՐԱՐԿԻՉՆԵՐ, ԱՍԵՂՆԵՐ, ԳԼԻԿՈԼԻԶԱՑՎԱԾ ՀԵՄՈԳԼՈԲԻՆԻ ՍԱՐՔԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԹԵՍՏԵՐԸ) ՏՊԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. «Վերահսկի՛ր դիաբետը, ապրի՛ր լիարժեք կյանքով» միջոցառումների 2015-2019 թվականների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում և նյութերի տրամադրում դիաբետիկ կենտրոններին ու շահառուներին

2. Բոլոր դիաբետիկ կենտրոնների համար դիաբետի վերաբերյալ ուսուցանողների պատրաստում

3. Տպագիր կրթական նյութերի տրամադրում

4. Առաջադեմ երկրների փորձի փոխանակման նպատակով դասընթացների կազմակերպում

5. Ինսուլինային գրիչ-ներարկիչների անվճար տրամադրում՝ 2000 հատ (Հայաստանի Հանրապետությունում իր գործընկեր «ՄԼՆ-ֆարմ» ՍՊԸ-ի միջոցով)

6. Ասեղներ՝ գրիչ-ներարկիչների համար (Հայաստանի Հանրապետությունում իր գործընկեր «ՄԼՆ-ֆարմ» ՍՊԸ-ի միջոցով)

7. Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում դիաբետի կառավարման 4 կենտրոնի վերանորոգում, կահավորում և սարքավորումների ձեռքբերում

8. Դիաբետի կառավարման 4 կենտրոնի համար գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1) չափման անալիզատորների ձեռքբերում

9. Ծրագրի բոլոր շահառուներին գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1) չափման համար անհրաժեշտ թեստ-երիզների տրամադրում

10. Դիաբետի միջազգային օրը. Դիաբետի միջազգային ֆեդերացիայի (IDF)-ի կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպում Հայաստանի Հանրապետությունում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ